

պէս մեռցուց Երազը. ու մեռուցին նաեւ խաղաղութիւնը.

«Խաղաղութիւն արդ քեզի, ըստաննեցին ըզքեզ ալ, քեզ որ հիմա կը լողաս ճահիճներու մէջ արեան, խոշտանգըւած, խողխողուած՝ խեղճ փոքր Հայուն նըման...»:

«Մարտադաշտին վրայ» իր քնարը կը սարսռայ, մտածելով որ հոն մեր ցեղին արիւնը հոսեցաւ ուղիւսօրէն, ու մեր ցեղը չտեսաւ սիրտ մը իրեն օգնութեան փութացող: «Քսան Հնչակեան վկաներուն» որոնց հոգին կը մսի երբ արշալոյսէն առաջ, իրենց դէմ ցցուած տեսան մահափայտն իրրեւ խաչ. սակայն անոնք կախաղան կը բարձրանան դիւցազնօրէն. վաղը կը կատարուի անշուշտ իրենց երազածին իրականը. բանաստեղծը կ'ուզէ մարգարէ ըլլալ:

«Քայց և ինչպէս, ամէնքդ ալ, վերջին պահուն ձեր դիմաց, Երազային, շատ պայծառ, ուրիշ Արեւ մը տեսաք, Եւ ճօճեցաք օդին մէջ՝ զայն խըմելէ վերջ ցըյազ»:

Իր «Եւ նորէն միշտ» երգին մէջ տարտամ և յուսահատ, կը հարցնէ թէ արդեօք պիտի գտնուի հրեշտակ մը որ Հայուն խաչուած հոգին խաղաղեցնէ. որքան ջլատիչ են այս տողերը.

«Ամէն երազ՝ բըզըկտած և ամէն յոյս՝ փետրաթափ...  
Վաղորդային կարկառիլ հըրատոցոր շրթներուով...  
Հանգրուանի մ'ի խնդիր քալել, քալել առ խափ խափ  
Եւ անդունդի մը յանկարծ գտնել բացուածքն ոտքիդ քով...»:

Ու մտածել որ «Անտր քան մը այնտեղ» կը կատարուի մութին մէջ, գեղեց-

կացած ու թարմացած ազգ մը կը սպաննեն.

«Եւ այդ ազգը մերինն էր, և կ'սպաննէն զայն հիմա, Զայն կ'սպաննեն... Օգնութիւն, ահ, օգնութիւն, օգնութիւն...»:

Ո՞վ էր լսողը... ո՞վ էր զթացողը, սոսկումն ալ կը սոսկար մեր տառապանքը տեսնելով: Եւ... «Մարեցան դժոխքի ջահերն անգամ սոսկումէ»։ Ու ասով կը սպաննեն «սաղմերն իսկ ամէն յոյսի, հաւատքի» մեզ կը թողուն կենդանի մեռելներ...:

Թէքէեան իրդում մ'ունի որ անիմաստ է. ինքն ալ զգալով անոր անտեղութիւնն Աստուծոյ դէմ, «Պիտի մոռնաք»ը կ'երգէ, կը խնդրէ որ Աստուած մօտեցնէ հաշտութեան օրը և այն ատեն ամէն հայ Զայն պիտի օրհնէ իր հոգիին խորէն:

Թէեւ բանաստեղծը յետոյ կը շարունակէ յուսալքութիւն, զի Ապագան զոր կանչեցինք անձկանօք՝ զայն այսօր մեզի ոչ ոք ցոյց կու տայ: Իր այս հատորին մէջ երգուած է յուսահատութիւնը որպէս կափարիչ գերեզմանի մեր յոյսերուն:

Բանաստեղծն այս հատորին մէջ ցոյց տուած է իր շիկնոտ ըմբոստութիւնը, մերթաշքերուն մէջ յոյսը կը խաղայ պայծառ, մերթ կը սենայ գերեզմանի խաչքարին նման. միով բանիւ, հոս, բերթողին հոգին ցոյց տրուած է վճիռ, ան երբեք չի կորսնցներ իր հեզիկ հոգեբանութիւնը, ան կը ջանայ խեղդել ցաւերը, և միշտ կայտառ պահել ազնուական հոգին:

Աստղեր ու Անկեր նուագները՝ արձագանգ են «Հրաշայի Յարարիւն» հատորին մէջ ամփոփուած երգերուն:

Մենք չենք վերջացներ մեր խօսքը. մենք կը մաղթենք որ քերթողը վաղը երգէ «Փրկութեան» երգը, հայուն ուսէն մէկդի նետելով դարաւոր տառապանքը:

Հ. Ս. ԵՐԵՄԵՅԱՆ

Համակրած էի Լէօի, թէեւ զինքը չէի տեսած, չէի սեղմած անոր ձեռքը, չէի լսած անոր ձայնը, բայց ներշնչուած էի անկէ: Սն Շուշեցի դերձակի մը որդին, զրազէտ անձերու զրազատը՝ առանց զրազիտութեան ուսուցիչն ըլլալու. ան Շուշի թեմական դպրոցի և քաղաքային ուսումնարանի միջակ կարողութեան տէր աշակերտը, վերջը զրական վարպետներու դատաւորը կ'ըլլար և ջահակիրը «Մշակ»-ի խմբագրութեան: Տունը հաց կ'ուզէր, նիւթական աշխատանքով զրազրի և հեռագրատան պաշտօնեայ մնալով կը ճարէր այդ հացը: Նիւթական աշխատատեղի կեանքը շուտով կը լքէր. սեղանաւորներու երկրպագու չուզելով ըլլալ, զրամին ստրուկն ալ չուզեց ըլլալ, այլ իշխանը մատենագրութեան, այդ հաստատուն որոշումով, մըրտաւ խմբագրատան զրաքննակը և հաւատարիմ մնաց իր զրական ուխտին: Մեր արեւելահայ և արեւմտահայ մտաւորականներէն ոմանք, մասնագէտները զրականութեան և զրական գեղեցիկ ոճին, քննադատները զրողներուն, փողահարները մատենագրութեան, կշռողները զրական արժանիքներուն, ասոնք ամէնն ալ բաւական անկողմնակալ մնալով, կը ցանխոտովանիլ թէ ինչո՞ւ զմայլելի և հաճելի էր Լէօի գրիչը: Սակայն ոչ մէկն ըսաւ թէ ինչո՞ւ կը սիրուէր Լէօ իրրեւ խմբագիր և իրրեւ մատենագիր: Եւ ան վարան կրնամ ըսել որ Լէօ թէ ընկերական և թէ զրական շրջանակներուն մէջ սիրուեցաւ և յարգուեցաւ:

Լէօ յայտնուեցաւ ու ծանօթացաւ մեզի ամէնէն կորովի արձակագիր զրագէտը, արուեստագէտը որ զիտցաւ առանց զրթ-


ուարութեան՝ գեղեցիկ ոճի պերճ պատմութեան ձգել իր արձակ գրութեանց վրայ. մատենագիրը՝ որ ամէնէն աննշան գրքերուն խօսեցնել տուաւ լեզուով մը՝ որ կը հրապուրէր գիտուն և տգէտ ընթերցողները. խմբագրողը՝ որ ամէնէն պարզ հաւատաւորութիւնը հետաքրքրական կ'ընէր առ հասարակ ամէն մտաւորականներուն և ժողովուրդի ամէն դասակարգերուն: Լէօ սոսկապէս իրրեւ մատենագիր առնելով՝ զմայլելի է, և իրրեւ զրական աշխատաւոր մը՝ անզուգական, իրրեւ զրիչ արտազրոյ՝ անքննելիօրէն բեղնաւոր:

\*  
\*\*

Առանց իր հետ խօսելու կարելի էր ծանօթանալ անոր զրական հոգեբանութեան: Ինծի կը թուէր ժպտուն դէմք մը, լուրջ և խոհական, ու միշտ պատրաստ ժողովուրդին փաստաբանը մնալու: Կ'երազէի զինքը զրիւտ դատապարտուած մը, ճաշի պահերէն դուրս՝ միշտ կամ իր զրասենեակը կամ խմբագրատան մէջ բանտուած, ճերմակ թուղթին վրայ գլուխը կախ, կու տար իր մտքին ու գրչին զուգաշաւիղ՝ անհասանելիօրէն արագ ընթացք մը: Ու չես գիտեր թէ ան ընտանիքին, թէ զրականութեան հետ ամուսնացած էր: Ու չես գիտեր թէ ընտանիքին թէ զրքին հետ աւելի ընտանի եղած էր: Եւ սակայն ինքն ալ իրրեւ պարտաճանաչ տանուտէր մը, ունեցած էր իր ընտանիքը երջանկացընելու անփարատիչ հոգեբու ծփանքը: Այդ հոգերը յայտնած է իր «Պակոյախտ» անունով վիպակին մէջ. անդրանիկ զրական երկն է այն, 1888ին գրուած: Լէօ աշխատաւորներու սիրելի գրիչն է, զի հոն,



այդ վիպակին մէջ, ընտանիքի տէր աշխատաւորը կը տեսնէ թէ ինչպէս Լէօ կը գործընթաց իր վրայ, ինչպէս հեղինակը մոռնալով գեղարուեստի պերճութիւնը՝ կարեւորութիւն կու տայ խեղճ աշխատաւորին առանին հոգերուն։ Ատիկա ինքնակենսագրութիւն չէ, այլ աշխատաւորի սեւ ճակատագրին պատմութիւնը։ Կոր մը



Ծն. Նոյեմբեր 1860 Լ. Է. Օ. Վրէժ. Երևան 1932

հոգեբանութիւնն է այն, հօր մը չարաչար զոհողութիւնները, ինքնագրկումները, իր կնոջ և տղոց հաց հասցնելու պարտականութեան մէջ չթերանալու համար։ Դուն կը կարգաս այդ վիպակը, սարսուռը կը զգաս ճակատագրի անիրաւ կատակներուն։

\*\*\*

Կարելի չէր որ Լէօ անձանօթ մնար։ Հեռագրատունէն զուրս ելլելուն՝ իր ա-

նունը տպուած կը տեսնէիր օրագրի եւ թերթերու եւ հանդէսներու մէջ։ Եւ իր ստորագրութիւնը կրող ամէն մէկ գրուածութիւն կը յայտարարէ իր հոգին, կորովը, յանդգնութիւնը և անկեղծութիւնը։ Գրիգոր Արծրունիի «Մշակ»-ն սկսայ սնգուսպ եռանդով մը կարգալ աշն օրէն՝ երբ Լէօ հոն տեսնուեցաւ իրրեւ հրապարակագիր, իրրեւ պատմիչ, իրրեւ կենսագրող, իրրեւ գրագէտ, իրրեւ քննադատ և իրրեւ վիպասան։ Նոյն օրագրին այդ թուականէն սկսեալ մինչեւ խափանուած՝ այսինքն մինչեւ 1914, Լէօ ինծի հետ կը խօսէր այն համակրելի ժողովրդական ձայնովը՝ ինչպէս Գրիգոր Արծրունին։ Այդ օրագրին մէջ ան տեսնուեցաւ դաւար մտքի պերճ շքեղութեամբ։

\*\*\*

«Պանդուխտ»-էն վերջը կարգացուեցան իր միւս վիպակները «Այծարած»ը, «Ծայրեր»ը, «Թարախման գիշեր»ը, «Վերջին վերքեր»ը, «Կոտորածներ»ը և հայ «ամանդի» վիպագրութեան իշխանը և իշխեցողը «Մեկիքի աղջիկ»ը, ասոնք անձանօթ պիտի չմնան, որքան վրթանէս Փափագեանի օտարաշունչ վիպակները։ Լէօ ժամանակից վիպագրողներէն ոչ մէկը կրցաւ «Մեկիքի աղջիկ»-ի նման երկարաշունչ կատարեալ վէպ մը գրել։ 1905 ին լոյս տեսաւ ան, որ բոլորովին սպառած էր, «Պայ-

քար» գայն իրրեւ թերթօն տպեց և ներկայիս առանձին հատորով հրատարակեց։ Այդ ստուար հատորը, Լէօի վիպական գործերուն աղուորներէն աղուորը և մըշտատեւը կը համարիմ անսահման համուզումովս։ Ու ես կարծեմ, որ Լէօի համար ալ, իր վիպական գործերուն մէջ, անիկա պիտի ըլլայ իր նախադասելին, անպակաս գեղեցիկ առաւելութիւններով։

Ահարոնեանի «Մարտ»-ին մէջ Լէօ ցոյց

տուաւ տարեկան կեանքէն վէպեր, Բագուի սեղանաւոր հայերու կնամեծար նորամուտ թեթեւ բարքերու նկարագրութիւնները, ընթերցողին չէին կրնար հաւատացնել թէ հայ աստղերու տակ ապրումներ ըլլային անոնք։ Ֆրանսական նիւթապաշտ դպրոցը՝ կը հասկցուի նորը՝ իր թախծագին ազդեցութիւնը ցոյց կու տար հոն։ Լէօ այդ վիպական էջերովը առանց զիտակցութեան ինքզինքը կ'ամբաստանէր, և կը կշտամբէր։

\*\*\*

Ընթերցողը որ ծանօթ է Լէօի գրուածներուն, գայն կը գնահատէ պարզ ու պայծառ գրող մը։ Այս անթիտելի է, այս յատկութիւն մըն է, գրական թանկագին արժէք մը, որ քիչերուն տրուած է։ Պարզ գրել և գրածը սիրցնել շատ դժուարին բան մ'ըլլալը խոստովանած է Անաթոլ Գրանս։

Իր ամէն գրութեանց մէջ կուռ ոճէն խորշում մ'ունի. իմաստները չի քանդակել, նկարներուն պատառը մեծատարած կը բռնէ։ Իր խօսքը չի հոսեցներ, այլ ուժգնօրէն կը գտնէ ընթերցողին մտքին մէջ։ Իր գրութիւններովը կը կաշկանդէ քեզ ու դուն յօժարութեամբ իրեն պէս կը դատես և կը գնահատես։ քեզ համոզել կ'ուզէ, և դուն շուտով կը համոզուիս։ Բաղդատելով զինքը իր վարպետին՝ Գրիգոր Արծրունիին հետ, գաղափարի, յանդգնութեան և դատողութեան մէջ, համաձայնութիւնն անթերի է։ Բախտաւոր է Լէօ, որ նման վարպետի մը արօտին մէջ կրցաւ փառքն ու բախտը միասին ճարակել։

\*\*\*

Իրրեւ պատմիչ մատենագիր Լէօ ինքնատիպ է։ «Հայկական Տպագրութիւն» և այդ երկու հատորներուն յաջորդող «Ռու-

սանայ Գրականութիւն» աննախընթաց գործեր են՝ որոնց մէջ հեղինակը հայ տպագրական պատմութեան համայնապատկերն ստեղծած է։ Գոյները որոշ, ժամանակի ոգին չի կրնար հաշտեցնել իր օրերու ազատաշունչ գաղափարներուն հետ։ Խրաւ տապահանջ է, նախապաշարեալներուն դէմ կը պայքարի, գրական թերութիւնները իր աչքէն չեն վրիպիր, անխնայ կը քննադատէ, կը քանդէ, կը խարէ, կը հարթէ։ Վերածնունդի մեծ դէմքերը «Ստեփանոս Նազարեան», «Գրիգոր Արծրունի» և «Սուրբ Մկրտիկ» ոսկի շրջանակներու մէջ կ'առնէ։ «Յովսէփ Կար. Արդարեան» և նման միւս պատմական հին և նոր երկերուն մէջ, իրրեւ աններող դատաւոր նկատի կ'առնէ զիւրազրտական հարցերը. իր գաղափարներուն համաձայն կը կշռէ, կը վճռէ։ ամէն բանէ վեր՝ ազգին արդար պահանջներուն փաստարանը կ'ըլլայ։ Կուսակցական խնդիրները կոր ակնոցով կը զննէ, և ըստ այնմ կը դատապարտէ։ Հակաճառութեանց մէջ երբ կիրք կը մտնէ, այդ ատեն հակաճառողը կը կշռէ, կը գրէ և ուղիղ կը համարի իր կշռածը, իր գրածը։ Լէօ այնքան մեծ առաւելութիւններ, կատարելութիւններ, անբովանդակելի եւ ըստիւր ունեցած է, որոնց առջեւ ամօթահար կը պզտիկան իր պզտիկ սխալները։

\*\*\*

Մատենագրութեան կենսաբուխ շատըրուանէն իր շրթները երբեք չհեռացուց։ Ոտքերը կոխեց միայն այն մարմանդին վրայ ուր կը փռուէր Արարատի վեհափառ շուքը։ Անգործութեան սարսուռը չզգաց, զի խմած էր աշխատանքի բոցը կենսաբեր։ Մահը նուաճեց գայն, բայց անմահութիւնը արբշխ չհեռացաւ անոր շիրմէն։

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ

ԾԱՆ. — Ներկայս՝ ամիսի տեսութիւն ողբ. Լէօի հոգեբանութեան եւ գործին՝ կը հրատարակենք որպէս արձագանգ անոր մահուան տարեկիցին, 14 Նոյեմբեր 1932, եւ որպէս յարգանքի պատկ անոր շիրմին։ Ընդարձակ վերլուծում մը ողբացեալի գործին կարելի է տեսնել յօդուածագիր Վեր. Հօր «Ազգային դէմքեր»-ու է. հատ. էջ 203 - 242։ ԽՄԲ.